

**« ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ
ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ 2014Թ. ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Համաձայն « Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի ներքին աուդիտի 2014թ-ի հաստատած տարեկան ծրագրի, որում ընդգրկված են 53 միավոր՝ « Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժինը « Արագածոտնի մարզպետի կարգադրությունների համաձայն 2014թ ընթացքում իրականացրել է **48** « Պետական ուսումնական հաստատություն » ՊՈԱԿ-ներում համակարգի գնահատման աուդիտ ներառելով 2011-2012-2013թթ և **5** « Բժշկական կենտրոն » ՓԲԸ-ներում ֆինանսական աուդիտ ներառելով 2013 թ:

Աուդիտորական արդյունքների ամփոփումից հետո կազմվել են նախնական հաշվետվություններ և տրվել են աուդիտի ենթարկվող միավորների ղեկավարներին: Անհրաժեշտ քննարկումներից հետո պատրաստվել և ներքին աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարներին և ներքին աուդիտի կոմիտեին է ներկայացվել կատարված աուդիտորական առաջադրանքների վերջնական հաշվետվությունները:


35 «Պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ների վերջնական հաշվետվությունները քննարկվել են ներքին աուդիտի կոմիտեի կողմից:

Աուդիտի ենթարկվող միավորների ղեկավարները հաշվետվություններում ներառված շեղումների և բացթողումների վերաբերյալ տվել են համապատասխան բացատրություններ, այնուհետև կազմվել են գործողության ծրագրեր, որի հիման վրա աուդիտի ենթարկվող միավորների ղեկավարները պարտավորվել են նախատեսված ժամկետում վերացնել արձանագրված շեղումներն ու բացթողումները:

Ըստ վերջնական հաշվետվությունների ներքին աուդիտի ենթարկված **35** միավորներում բացահայտվել են **216** թերություններ, որոնց շտկելու նպատակով գործողության ծրագրերով նշվել է **132** առաջարկություններ, այդ թվում առաջարկվել է « պետական բյուջե վերականգնել **4107175** ՀՀ դրամ:

15.12.2014թ դրությամբ « պետական բյուջե վերականգնվել **2123196** ՀՀ դրամ:

8 «Պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ների վերջնական հաշվետվությունները պատրաստ են քննարկման ներքին աուդիտի կոմիտեի կողմից, իսկ **5** «Բժշկական կենտրոն» ՓԲԸ-ների աուդիտորական առաջադրանքները գտնվում են ավարտման փուլում:



Ներքին աուդիտի բաժնի պետ՝

Ս. Մուրադյան